

ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԺԶ. ՏԱՐԻ 2002

ՅՈՎՂԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻԻՆՆԵՐԻ ԼԵԶՈՒԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹԻԻՆՆԵՐԸ

Լարենտի Յովհաննիսեան

Ե դարի սկզբից՝ գրերի գիւտից անմիջապէս յետոյ, հայ իրականութեան մէջ բուռն թափ է ստանում թարգմանական գործը: Սուրբ Գրքի հայերէն թարգմանութեամբ կանխորոշուեց ազգի ճակատագիրը, ապրելու եւ գոյատեւելու կենսաձեւը, յստակեցուեցին ազգային-բարոյական չափանիշները:

Բացի Աստուածաշնչից թարգմանուեցին բազում այլ գործեր, որոնց հիմնական միտումը քրիստոնէական գաղափարախօսութեան արմատաւորումն էր: Այս ընդհանուր նպատակաւորութեան յենքի վրայ թարգմանական գրականութիւնը նաեւ, «աշխարհիկ» կեանքի անգնահատելի տեղեկատու է՝ ժողովուրդների պատմութիւնից մինչեւ առտնին բարքեր ու սովորութիւններ, աշխարհընկալման գաղափարախօսութիւնից մինչեւ սնտրիապաշտական զանազան երեւոյթներ:

Թարգմանական գրականութիւնը մեծապէս նպաստել է նաեւ հայ ինքնուրոյն գրականութեան ձեւաւորման ու զարգացմանը, ապա եւ հայ գրական լեզուի կայացմանը:

Եթէ 5-րդ դարի թարգմանական գրականութեան ուղղուածութիւնը յստակ էր, ապա սկզբնաղբիւրի լեզուի հարցը, այսինքն՝ թարգմանել ասորերէնից, թէ՞ յունարէնից՝ էական չի համարուել: Երբեմն յունական սկզբնաղբիւրը թարգմանուել է ասորական թարգմանութիւնից, բացառուած չէր եւ հակառակը: Կարեւոր է համարուել երկի բովանդակութիւնն ու գաղափարախօսութիւնը. ըստ երեւոյթին, թարգմանուել է այն բնագիրը, որը ունեցել են, կամ որ լեզուին տիրապետել է թարգմանիչը:

Հայագիտութիւնը 5-րդ դարի գրաբարի լեզուական իւրայատկութիւնները քննելիս առաւել ուշադրութիւն է դարձրել ինքնուրոյն երկերին, իսկ թարգմանական գրականութեան լեզուն համակարգային քննութեան չի ենթարկուել, եւ յաճախ լեզուական երեւոյթները մասնակիօրէն քննուել են պատմաբանասիրական խնդիրների լուսաբանման գործընթացում:

5-րդ դարում յունարէնից կատարուած թարգմանութիւնները ե՛լ բովանդակային, ե՛ւ ծաւալային առումով գերա-

զանցում են ասորերէնից թարգմանուածներին¹:

Նկատուած է, որ Աստուածաշնչից յետոյ երկրորդ ծաւալուն գործը Ոսկեբերանի երկերի թարգմանութիւններն են: Բժախնդիր քանակական հաշուարկների դէպքում կարելի է արձանագրել, որ ծաւալային նշուած տարբերութիւնը այնքան էլ ակնյայտ չէ, իսկ եթէ հաշուի առնենք Ոսկեբերանի գործերի յետհինգերորդ դարեայ թարգմանութիւնները, ապա բացայայտորէն այդ հեղինակից կատարուած թարգմանութիւնները հայ մատենագրութեան մէջ ամենածաւալունն են:

Ոսկեբերանի գործերի զգալի մասը թարգմանուել է 5-րդ դարի առաջին կէսին՝ այսպէս կոչուած դասական հայերէնի շրջանում: Ինչպէս նկատուած է Հ. Ա. Վարդանեանը. «Դասական հայերէնի անվիճելի հարստութեան մասին կազմուած գաղափարը զգալապէս նուազ եւ նուազ կ'ըլլար անշուշտ, եթէ Յովհաննու Ոսկեբերանի մեկնաբանական գործոց թարգմանութիւնները չունենար հինգերորդ դարը իւր մատենագրութեան շարքին մէջ» (ՀԱ. 1912, 730):

Մեր հետազոտութեան ծաւալի շրջանակներում քննութեան ենք առել Ոսկեբերանի այն երկերը, որոնք հաստատապէս 5-րդ դարի թարգմանութիւններ են (գոնէ այդպէս է ընդունում մեր բանասիրութիւնը, եւ դրան հակասող փաստեր մենք չենք տեսնում):

Խոստափելով բազմաթիւ ճառերի, մեկնութիւնների վերնագրերի թուարկումից՝ նշում ենք հրատարակուած գրքերի վերնագրերը միայն, ըստ այդ գրքերի՝ նաեւ էջերը:

Անդրադարձել ենք հետեւեալ գործերին.

–Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդ-

նուպօլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի, հտ. 1, Վենետիկ, 1862 (համառօտագրուած՝ Ոսկ. Պօղ.):

Այս գրքի երկրորդ հատորն էլ է ներառում հինգերորդ դարեան որոշ թարգմանութիւններ, բայց զետեղուած են նաեւ ուշ շրջանից կատարուած թարգմանութիւններ: Դարձեալ հրատարակուել է 1862 թուականին:

–Երանելոյն Յովհաննու Ոսկեբերանի մեկնութիւն Եսայայ մարգարէի, Վենետիկ, 1880 (համառօտագրութիւնը՝ Ոսկ. Ես.):

–Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդինուպօլսի եպիսկոպոսապետի յաւատարանագիրն Մատթէոս, Վենետիկ, 1826 (համառօտագրուած՝ Ոսկ. Մտթ.):

–Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի ճառք, Վենետիկ, 1861 (համառօտագրութիւնը՝ Ոսկ. ճառ.): Այս գրքի բոլոր հատուածները ոսկեդարեան չեն: Համեմատելով Ակիւնեանի ցանկի հետ [Ակիւնեան, 1932]՝ ընտրել ենք միայն մի քանի ճառեր, որոնք հաւաստիօրէն V դարից են: Յղումների ժամանակ ճառերի վերնագրերը չենք նշի, այլ գրքի էջը, ինչպէս վարուում ենք Ոսկեբերանի միւս գործերի յղումների դէպքում:

Ե դարի լեզուական բոլոր իրողութիւնները (թերեւս բացառութեամբ յունաբանութեան), առարկայանում են Ոսկեբերանի թարգմանութիւններում:

Առանձնակի հետաքրքրութիւն է ներկայացնում բառապաշարը: Սակայն նախքան բառապաշարին անցնելը համառօտակի, մի քանի օրինակներով ցոյց տանք դարձեալ բառապաշարի հետ աղերսուող, բայց այլ բնոյթի լեզուական իրողութիւններ:

Ոսկեբերանի լեզուի մասին Աճառեա-

նի «բոլորից յստակը, արուեստաւորն ու գեղեցիկը» բնութագրումը պատահական չէ [Աճառեան, 1951, 78]: Այդ թարգմանութիւններին բնորոշ են խօսքի կառուցման եղանակների բազմազանութիւնն ու կանոնաւորութիւնը, քերականական ձեւերի, շարահիւսական տարբեր միջոցների կիրառումը:

Ակնյայտորէն նկատելի են՝

Ա) Յարադրութիւնների բազմազան կիրառութիւններ:– «... զի բազում միւթարութիւն է նստելն առ հիւանդի, զքերանսն ի միմեանս ածել, զաչսն ունել, զձնօտսն պնդել, զյետին բանսն լսել» (Ոսկ. Պօղ. 1, 438):

«Իսկ եթէ զնա թողեալ՝ այսր անդր հայիցի բանդագուշեալ եւ զվայրօք զաչսն ածիցէ, ունայն ձեռօք ելանիցէ անտի» (Ոսկ. Մտթ. 1, 304):

«Վասն այնորիկ եւ ի քուն իսկ եմոտ» (ն. տ. 437): «Այլ չգիտեմ զիարդ վայրապար ընդ խարս եկի յայսպիսի բանքս» (467): «Եւ այն ... գան ես ըմպեմ» (588): «Յորժամ ի վշտի գոք տեսանիցէ, յայնժամ հանգչի եւ ոգի առնույ» (596): «... եւ ոչ սակաւ ժամանակս տային ողն առնույ» (Ոսկ. Ես. 92):

Բ) Հոմանիշների կիրառութիւններ:– «... եւ առնիցեն կուրտս, իսկ արքն անքիճիք ասեն» (Ոսկ. Ես. 244): «Զի ոչ աշակերտք ոք մօտ էր եւ ոչ աւետարանիչ ոչ հուպ» (403): «Յուղարկաորութիւն կոչեն եւ ոչ դիւհանութիւն» (Ոսկ. Պօղ. 1, 128): «... ողորդիկ եւ հեղեղատք ջուր սաստկութեան յորդիցեն» (ն. տ. 11): Կան եւ բազմաթիւ բայական հոմանիշների օրինակներ. հմմտ. «որոց ոչ կօշիկք մաշեցան եւ ոչ հանդերձ լեշկեցան» (ն. տ. 456): Յունարէնում նոյնիմաստ երկու բայերի փոխարէն մէկ բայ է:

Գ) Կրկնութիւններ:– Նկատելի են (ինչ-

պէս եւ Ե դարի շատ գործերում) նոյնարմատ գոյականների եւ բայերի կողք-կողքի կիրառութիւններ. «... եւ ոչինչ սակաւ շահս շահիցն» (23): «Յորժամ Աստուած գործ ինչ գործիցէ» (69): «Զի նա խարելով խարեսցէ զթշնամիս իւր» (309) «նքա անձամբ անձին սրեն սուսեր» (300): «Գիտել գիտէին եթէ նա աստուած է» (316): Վերոյիշեալ օրինակները Եսայու մարգարէութեան մեկնութիւնից են, բերենք օրինակներ Մատթէի մեկնութիւնից. «... անհնարին յիմարութեամբ յիմարեցաւ» (687): «Բայց այժմ եւ շահս շահիցն», (695): «... ազատն ի մէջ թատերց զաղախեաց ծանակս ծանակի» (16): «... այսպիսի ինչ հնարս հնարէր» (33), «այլ անդէն իսկ զհրեշտակաց որոճումն որոճէին» (70): «Բիւրապատիկ ողբով ողբայցեմք» (82):

Նման կարգի օրինակներ յաճախական են նաեւ միւս գործերում:

Դ) Ծարադասական պէսպիսութիւններ:– Ինչպէս ցոյց են տալիս փաստերը, գրաբարի շարադասութիւնը միօրինակ չէ: Այստեղ օրինակներ կը բերենք հիմնականում յատկացուցիչ-յատկացեալի ու կապի խնդիրների շարադասութեան նմոյշներից: Գրաբարում յատկացուցիչը կարող է դրուել յատկացեալից առաջ կամ յետոյ: Դժուար է պնդել, թէ որն է կանոնականը, յամենայն դէպս թերեւս յաճախականն ու գրական-գրաւոր լեզուին աւելի բնորոշը յատկացուցիչի յետադասութիւնն է: Այդպէս է եւ Ոսկեբերանի թարգմանութիւններում. սակայն շատ են եւ հակառակ բնոյթի օրինակները. «... եւ մարգարէիցն ընթացք եւ օրէնսդրին երկիւղ եւ պատերազմաց սպառնալիք եւ հինից արշաւանք» (Ոսկ. Ես. 4): «Եւ յետ նորա հարիւրապետին ծառայ ապաքինեցաւ ... հիւանդութենէ» (75):

Վասն, վերայ, սակս կապերի շարա-

դասույթի տարբեր դրսեւորումներ կան, ընդ որում, հետաքրքրականը կապի յետադասույթի են է, որը թերեւս ակնի ժողովրդախօսակցական կամ բարբառային երանգ ունի: Բերենք մի քանի օրինակներ. «Յահարովնի վերայ յարեան յետ զորթն ձուկելոյ Կորիս եւ Դահան» (Ոսկ. Պող. 1, 186): «Քանզի ամուսնութեան վասն տուաւ, որդեծնութեան սակս շնորհեցաւ, ոչ վասն շնութեան եւ ոչ ապականութեան աղագաւ» (ն. տ. 688): «Սորին վասն եւ զբռնաւորագոյն զախտն դնէ» (ն. տ. 293, 296): «Զի խեղբեալ իցես յընչից վերայ» (ն. տ. 390):

Ե) Թեւաւոր խօսքեր, բարոյագիտական մտքեր, համեմատութիւններ:— «Առաւել քան աչաց բացդ՝ լեզուիդ զգուշանայցես» (Ոսկ. Մտթ. 732): «Թէ յորժամ Աստուած գործ ինչ գործիցէ՝ դու զայն մի քննե» (Ոսկ. Ես. 69): «Զի իմաստուն եւ ազատաբարոյ կին, երկիւղած եւ ցած զաշխարհս արժէ» (Ոսկ. Պող. 1, 897): «Զիք ինչ ցուրտ բարեկամութիւն քան զայն, որ ի սեղանոյն լինիցի... սերտ բարեկամութիւն անտի եւեթ ծնանի ուր հոգեւոր սէրն իցէ» (Ոսկ. Պող. 1, 536): «Կանայք ո՞ր շնութեան ցանկան, նոքա եւ սպանութեան զրկելոյ արանցն մտաբերեն» (Ոսկ. Մտթ. 690): «Մի գիտասցէ ձախ քո՝ զինչ գործիցէ աջդ» (Ոսկ. Մտթ. 243): «Զէն հանճարոյ են շրթունք իմաստունք» (Ոսկ. Ես. 368): «Երիվար արքունի է լեզուդ, թէ սանձս դնիցես եւ ուղիղս վարիցես հեծանի թագաւորն» (Ոսկ. Մտթ. 2, 73): «Լաւ է գան բարեկամաց, քան զքծինս թշնամեաց» (Ոսկ. Ես. 104):

Զ) Օտար բառերի թարգմանութիւններ:— Այս կարգի օրինակները մեծաթիւ են, եւ կը բերենք ըստ առանձին գործերի: Կարելի է առանձնացնել երկու բնոյթի թարգմանութիւններ՝ մի դէպքում Ոսկեբերանը թարգմանում է երբայերէն, ասո-

րերէն բառեր եւ ներկայացնում յունարէն, որից էլ հայ թարգմանիչը՝ հայերէն, միւս դէպքում՝ հայ թարգմանիչը, որպէս յաւելում, տալիս է յունարէն մի քանի բառերի ու յատուկ անունների հայերէն հոմանիշը:

Եսայու մեկնութիւնից:— «Զի ի հերբայեցի լեզու՝ հրեղէն բերանք թարգմանին սրորէք» (64): «Յասուբա, հերբայեցի լեզու՝ թէ զհարդ իցեն կամ զհարդ կայցեն թարգմանի» (79): «Զի եւ ի հերբայեցի արովթն՝ անվայելչութիւն թարգմանի» (173): «Կարող եմ քանզի տէր եմ սաբայովթ, այսինքն՝ զօրութեանց» (227): «Եբրայեցին Ուքուղիզդով ասէ, որ թարգմանի ողորմութիւն» (252): «Կերպարանեսցի յանուն Յակովբայ, որ թարգմանի խաբող» (309): «Իսկ եբրայեցին եւ ասորին ոչ մեղուս ասեն այլ ձիաստաց» (92): «Արածանի գետոյ, զի յայնկոյս Արածանուոյ են ասորեստանեայք եւ պարսիկք» (93): Յունարէնում Արածանի միտարէն Եփրատ է: Հայ թարգմանիչի միջամտութիւնը ակնյայտ է:

Պողոսի գործերի մեկնութիւնից:— «Քանզի եւ շիրիմ շինեցին, ասէ, անսուրբ, կրետացիքն դիայ, զոր հայքն Արամազդ ասեն» (301): «Զեւս, զոր եւ դիոսն կոչեն եւ հայերէն Արամազդ» (302): «Որք զձիացուսն ի քմաց ստեղծանեն ... այնպիսին որ զվիշապառիւծ քաղսն համբաւեն ... որպէս եւ պայք ծովացուս իմն եւ վիշապս մարդակերպս եւ աուլեզս համբաւեն» (60):

Մատթէի մեկնութիւնից:— «Քանզի Յիսուսն անուն յերբայեցուոց՝ հայերէն փրկիչ թարգմանի» (1, 22): «Զի Փարէս խրամատութիւն թարգմանի» (35): «Քանզի զամենայն դատարկութիւնսն շաբաթս կոչէին եւ շաբաթս իսկ դատարկութիւն թարգմանի» (2, 583): «ԶԱփրոզեսան ցանկութիւնն ասեմ, այսինքն՝

զԱստղկան» (3, 70):

Այս կարգի օրինակներ, ինչպէս կը տեսնենք, կան թարգմանական այլ գործերում եւս: Սրանց առկայութիւնը կախուած է թարգմանական երկի բնոյթից, հեղինակի, ապա եւ թարգմանիչի քաջատեղեակութիւնից: Եթէ հնարաւորութիւն լինի Ե դարի հայերէն բոլոր գործերից առանձնացնել, դասդասել այս տիպի վկայութիւններն ամբողջութեամբ, ապա ըստ էութեան գործ կ'ունենանք երբայերէն-յունարէն-հայերէն բառարանի հետ՝ գրուած հինգերորդ դարում, որն, անշուշտ, լեզուաբանական եւ բանասիրական մեծ արժէք կ'ունենար: Հէնց այս վկայութիւնների շնորհիւ է, որ հետագայում մեր բանասիրութեան մէջ տրուել են օտար բառերի բացատրութիւնները, ստուգարանութիւնները:

Է) Գրական, կանոնարկուած իրողութիւններին յարող երեսոյթներ:— Նկատի ունենք, այսպէս կոչուած, ժողովրդախօսակցական, բարբառային երեւոյթները: Դրանց տեսակարար կշիռը Ոսկեբերանի թարգմանութիւններում զգալի է: «Զեն ինչ բանից պէտք (Ոսկ. Պող. 1, 83): «Թէպէտ աշխարհի տէր առնիցես զիս, չգիտէ ունել շնորհ, չհամարի թէ ունի ինչ քանզի անյազ է ցանկութիւն ախտին, որչափ առնու՝ եւս կարօտի» (ն. տ. 235): «Առն տուր. հատ զպատճառս պոռնկութեան»: Առն տուր նշանակում է, «ամուսնացրու»: Ընդգծուածը ակնյայտօրէն ժողովրդախօսակցական երանգ ունի: «Վասն զի ասաց, թէպէտս ոչ ինչ ունիմ ի կողմանս եւ փափագումն ի բազում ամաց հետէ ունիմ գալ առ ձեզ» (Ոսկ. Պող. 1, 409):

«Քանզի զամենեսին կամի առ ինքն ամփոփել, զուշ եւ ուրուշ մոգել» (ն. տ. II. 553): Ուրուշ բառը միայն այս եզակի վկայութեամբ է բերում ՆՀԲ-ն՝ զուշ եւ ուրուշը համեմատելով բարբառային ուշը մու-

շը, խելքն ու միտքը ձեւերի հետ: Ժողովրդախօսակցական երանգը ակնյայտ է կասկածելի է միայն Ե դարից վկայութեան հաւաստիութիւնը:

Բերենք զանազան կարգի դարձուածների, ոճերի օրինակներ. «Ի հրապարակս եւեթ կամի ճեմել եւ ի մատուցան գնալ» (ն. տ. 649): «Յորժամ ի վշտի զոք տեսանից, է յայնժամ հանգչի եւ ոգի առնու» (649): «... իսկ ի մերում միջի թէպէտ եւ կոչեսցին տեսաք, պիտականութեամբ կոչին» (Ոսկ. Ես. 296): Ե դարի թարգմանական գրականութեան մէջ այս կարգի օրինակները ամէնից յաճախական են Ոսկեբերանի գործերում, որոնց ծաւալը եւ, անշուշտ, թարգմանիչի (թարգմանիչների) միտումը, հնարաւորութիւն են տալիս բացայայտելու մեր լեզուի այդ ուշագրաւ իրողութիւնները, որոնք անպայմանօրէն արժէքաւոր են լեզուի զարգացման պատմական ընթացքի լուսաբանման տեսանկիւնից: Յատկապէս նկատելի են զանազան փոխաբերացումներ, որոնք կենդանի խօսքի արգասիք են: Բերենք օրինակներ Ոսկեբերանի տարբեր գործերի թարգմանութիւններից:

Մատթէի մեկնութիւնից:— «Քանզի զտիւն գիշերս գործէ արբեցութիւնն եւ զլոյս՝ խաւար եւ աչօք բացօք անդէն առ ոտսն չտեսանեն արբեցողքն» (առ ոտն նշանակում է «մօտը»: Օրինակը քաղել ենք՝ Թոռնեան, 1891, 1, 95): «... չհամարեմք յոգւոցն շտեմարանս, այլ ընդ վայր եւ վայրապար թողումք սահել ի մտաց» (1, 68): «Իսկ եթէ զնա թողեալ՝ այսր անդր հայիցի բանդագուշեալ եւ զվայրօք զաչսն ամիցել ունայն ձեռօք ելանից է անտի» (1, 304): «Եթէ աւազակ յորժամ ընդ միմանս աղ առնուցում (իմա՝ հաց ուտեն, սեղան ստան) մոռանան զբարսն» (2, 498): «Լեզուի սանձս դիցուք» (2, 544): «... զդուռն բերանոյ բանալ» (2, 600):

Պողոսի թղթերի մեկնությունից (Հտ. 1):- «Մինչեւ ցերբ յերկուս ոտս կաղայցեք» (253): Նշանակում է «չհասկանալ»: «Մինչդեռ պատկառութիւնն իբրեւ սանձք ի բերան կայցէն» (95): Ներքոյի- շեալ օրինակները երկրորդ հատորից են՝ հաւանօրէն Ե դարից. «էր վասն, ասա ինձ, զպարանոցդ ի վեր ձգես, ընդէ՞ր գնաս ի ծայրս մատանցդ, հի՞մ գոյնսդ ի վեր պարզես, ընդէ՞ր զլանջսդ այտուցանես ...» (303): «Իսկ դու առանց ուրուք մղելոյ եւ հարկաւորութեան ծամես զեղբայրն խաժանելով եւ պատառելով. զի թէպէտ եւ ոչ ատամամբք, այլ բանիքն՝ որ եւս դժնդակ վէրս գործէ քան զժանեացն» (316):

Եսայու մարգարէությունից:- «Պիղծ շրթունս ինձ թուի ... առ ի համեմատութիւն հրեղէն բերանոյ եւ բոցեղէն աչաց» (67): «Շլացուցանէին զաչս մտաց» (72): «... զճանապարհն, որ զբազում ժամանակս կուրացեալ իցէ եւ անհետ եւ անբեւոյթ լեալ...» (248):

«Սանձս եդ յերախս հոգւոց մերոց» (287): Կարելի է շարունակել փոխաբերացուած օրինակների շարքը, սակայն բաւարարուենք այսքանով, մանաւանդ որ առանձին բառերի վերաբերեալ փաստեր կը նշենք Ոսկեբերանի բառապաշարի՝ ստորեւ կատարուող քննութեան ընթացքում:

ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Քանի որ Ոսկեբերանի թարգմանութիւնները իրենց ծաւալով Ե դարի մատենագրութեան մէջ առաջնային դեր ունեն, բնականաբար բառապաշարն էլ ամենահարուստն է ու ճոխը (զիջելով գուցէ միայն Աստուածաշնչին): Ոսկեբերանի գործերի համարաբառների չգոյութեան պայմաններում հնարաւոր է գոնէ մօտաւոր չափով նշել ինչպէս օգտագործած

բառերի ընդհանուր քանակը, այնպէս էլ միայն Ոսկեբերանի երկերում հանդիպող կամ առաջին վկայութիւններ հանդիսացող բառերի թիւը: Սակայն գրաբարի բառարանների ընձեռած հնարաւորութիւնները եւ Ոսկեբարանի մի քանի գործերի բառապաշարային քննութիւնը թոյլ է տալիս ենթադրելու, որ դրանք շատ-շատ են ու տարաբնոյթ:

Նկատուում է, որ հայկազեան բառարանագիրները ըստ ամենայնի օգտագործել են Ոսկեբերանի հինգերորդդարեան թարգմանութիւնների նիւթը: Նշենք, որ ՆՀԲ-ի բազմաթիւ վկայութիւններ Ոսկեբերանից են: Մեր հաշուումներով ՆՀԲ-ի եզակի կամ առաջին վկայութիւններից մօտ 700 բառեր՝ համապատասխան օրինակներով, քաղուած են Ոսկեբերանի գործերից: Սա ինքնին արդէն խօսուէն փաստ է, որ հաստատում է այդ գործերի բառապաշարի հարստութիւնը: Նպատակայարմար չգտնելով բոլոր այդ բառերը այստեղ ներկայացնելը՝ ներկայացնենք մի մասը՝ որոշ դասակարգումներով, որը թոյլ է տալիս միաժամանակ գաղափար կազմելու եզակի վկայութիւնների բնոյթի մասին:

1) Նախադաս բաղադրիչներով կազմութիւններ

Ամենամեծանոց, ամենահնարութիւն, ամենաճշմարիտ, ամենիշխող, ամենողորմութիւն...

այլ- այլաբարբառ, այլակերպարան, այլակերպումն, այլայլագոյն, այլայլապէս...

ան- անազգական, անամաչելի, անանքատ, անարգելական, անարժանաւոր, անգիւղ, անժամութիւն, անծուփ, անհանճարական, անհնութիւն, անձեւական, անճմլելի, անմարտական, անշշուկ, անողորմելի, անպատասխանելի, անպղծելի,

անտաղտուկ, անտեչիկ, անփքացու- թիւն...

բազում- բազմախաղ, բազմահաճոյ, բազմահոգութիւն, բազմամանուածոյ, բազմավիշտ, բազմիրութիւն...

բարի- բարեդրուժ, բարեընկալ, բարեխօսանք, բարեհաշտող, բարեհնար, բարեմարդութիւն, բարեշէն, բարեպարտ...

դժուար- դժուարադարձ, դժուարախիլ, դժուարակալ, դժուարակատար, դժուարականգնելի, դժուարակենցաղ, դժուարանք, դժուարուսանելի...

դիւր- դիւրախորտակ, դիւրամաշ, դիւրաչոր, դիւրարհամարհելի, դիւրարուեստ, դիւրաքակութիւն...

ընդ- ընդարձակատարը, ընդարձակերասանակ, ընդդիմադարձիմ, ընդդիմախօսել, ընդմիջաբար, ընդունայնապէս, ընդվայրախօսութիւն, ընդվայրընկեցիկ...

չ- չազնուութիւն, չահագին, չարուեստ, չաւատամ, չբարի, չբնաւոր, չզարդ, չխաղոյք, չկեցու, չմեղադրութիւն, չմնալի, չյուսալի, չնչինագոյն, չոխակալ, չպիտոյանամ, չքութիւն...

չար- չարագագան, չարագործաբար, չարահաւ գործել...

վաղ- վաղակարծեմ, վաղեփեաց, վաղցասումն...

քաջ- քաջահով, քաջանուաստ, քաջասուր, քաջատեսութիւն...

2) Վերջադաս բաղադրիչներով կազմութիւններ

(ա)բար- ամբարհաւաճաբար, պատճառաբար, պատուաբար, օրինաբար...

(ա)գոյն- անխօսագոյն, առատագոյն, բանաւորագոյն, գեղագոյն, ժտագոյն, ծառայագոյն, վիճաբանագոյն, տաժանագոյն...

ական- ախոյեանական, ամբարտաւա-

նական, անազգական, անարգելական, անհանճարական, անթառամական, անծերական, անձեւական, անմարտական, առաւելական, բարձրական, բեռնական, գաղտակրական, գոռական, լպրշական, լրբարանական, խնամածական, խլիլական, կենցական, կռուական, հեղձական, հլուական, հպարտական, սեւական, վերածողական...

անք- բարբարանք, բարեխօսանք, բարուրանք, դժուարանք, թարթափանք, լպրշանք, խանդանք, խորշանք, խտպտանք, համեմանք, մխմխանք, յերկուանք, նոժանք, շամբշանք, շքթանք, սաքաթափանք, ստկանք, փայփայանք, փոփոգանք...

աւոր- գոգաւոր, իշխանաւոր, կողի- նաւոր, հարցաւոր, հերաւոր, չբնաւոր...

բեր- բժաբեր, խաղողաբեր, կաթնաբեր...

գիր- առակագիր, հելլենագիր, ներագիր, սպիտակագիր, պատկերագիր...

գործ- ազգագործ, առաւելագործ(եմ), աւարտագործ(եմ), կապուտակագործ, ճաշագործ, յանկարծագործ, պղակուղագործ, ստուգագործ...

թիւն- ազգատոհմակցութիւն, ազնուագրութիւն, աղանդութիւն, անժամութիւն, անուշամտութիւն, բազմիրութիւն, բարեմարդութիւն, բացերեսութիւն, բնականութիւն, գունատութիւն, դաւաճանողութիւն, գերեզմանաբրութիւն, դիւրութիւն, երաժշտութիւն, երեկութիւն, թեթեւագնացութիւն, ինչպիսութիւն, հմտութիւն, ձեռագրութիւն, ճոխաճանութիւն, մեծերեւելութիւն, սասանութիւն, փոկահանութիւն...

ի- աղաչելի, անճմլելի, անողորմելի, անպատասխանելի, դժուարականգնելի, չմնալի, չյուսալի, ջեռլի...

իկ- ազդեցիկ, այլասացիկ, անասնիկ,

անտեչիկ, արագախաբիկ, բանջարիկ, բռնագբօսիկ, գերագանցիկ, գինեվաճառիկ, գողացիկ, երկրիկ, զարգասիրիկ, զբօսուցիկ, ընդվայրընկեցիկ, իրաւացիկ, կանխասացիկ, իւղիկ, հացիկ, մրգիկ, նաւակիկ, ողորթիկ, պախրէիկ, պարէգօտիկ, ջրիկ, սենեկիկ...

իչ- աղմկիչ, հաճոյացուցիչ, մերկացուցիչ, յուռթիչ, ուտիչ, ստահակեցուցիչ, տասանորդիչ, քամահրիչ...

լից(լի)- ալպանալից, գինելից, գեղխալից, որջլալից...

միտ- զգօնամիտ, հաւասարամիտ, մորոսամիտ, տարամիտ,

ոտ(կոտ)- խոշոտ, խռովկոտ, ճերոտ, ճենճերոտ(իլ), վախկոտ, տաղտկոտ, փաղաքշոտ...

ոց(անոց)- աղբանոց, աղօթանոց, եգնանոց, ընթանոց, կապելանոց, շմբոց, որրոց, պատկողանոց, վարժոց...

ու- երախտառու, թագաւորանարգու, նախանձառու, չկեցու...

ուն- թասուն, խարխարուն, դողուն...

պէս- այլայլապէս, աւաղապէս, գերապէս, խոնարհապէս...

սէր- արուսաէր, իշխանասէր, հեռասէր, միմեանցասէր...

Կառուցուածքային այս տիպերը խորթ չեն գրաբարին, սակայն վերը նշուած բառերը առկայ են միայն Ոսկեբերանի գործերում: Դրանց մի մասը գուցէ թարգմանչի նորակերտութիւնն է, բառերի մի խումբ էլ թերեւս գործառել է գրաբարում, բայց այլ վկայութիւններով մեզ չի հասել:

Որոշ վիճակագրական տուեալներ էլ քաղել ենք Աճառեանի Արմատական բառարանից: Այստեղ էլ մի քանի տասնեակ բառեր յղուած են միայն Ոսկեբերանից: Դրանք են՝

Ախամախ, ամեստ, անառկել, անգտի, ասպակ, ասպուճակ, արգաստէր, արզն, բազրի, բարբարիկ, բարու, գասրել, դգշուտ, դերձակ, զակակ, ըմփորտել, ընդդայ, թէղք, ժայթքել, ժմերտ, լկտի «գեսպակ», լպիրշ, խարմեայ, խերեւէշ, խշտրել, խորակ, խունաւագութիւն, ծանծ, ծլիլ «վախենալ», կճպել, կողոփոց, կութ «գինու տականք», կուրտ, կցիր, կցրել, հակահոթիւն, համտիկ, հանգամումն, ճիւղ, ձոխիլ, մեթել, մենթան, միմ, միւսիոն, յագգդել, յամբայր, յառգդել, յղկնտեր, յոյգ, յոյր, յոպնակ, յօղել, նիտալ, նքողակ, շաղշափել, շառաւն, շմբրոց, շուշել, շտոգանել, ուլփագ, որոթ, պախաճճամ, պախճաւանդ, պանդեմի, պաւղրիլ, պերեւեշտ, պժգալ, պսեմն, պրիւտան, սամտի, սաքաթափանք, սոպել, ստէծ, ստի «կարգ», ստողիլ, ստորմի, վատգոհարութիւն, տոհորակել, տուռն, փաղ «թուռն», փարաւաթել, փարել «ման ածել», փոփոգել, քարուակ, քեծ, քրքուիլ, քրքուցուցանել...²

Այս բառերի մի մասը թերեւս հինգերորդարեան վկայութիւնն է, մի մասն էլ բացակայում է ՆՀԲ-ում, կամ Արմ-ում ստուգաբանուած է, այսինքն՝ պահանջում է գործառական, ծագումնաբանական քննութիւն:

Ոսկեբերանի բառապաշարը կարելի է տարբերակել նաեւ՝ ըստ իմաստային որոշ խմբերի՝ նրանում գտնելով ե՛ւ զգալի նոր նիւթ, եւ զանազան կարգի տեղեկութիւններ: Անդրադառնանք մի քանի այդպիսի խմբերի:

Ա) Հագուստ, զարդեղէն. աղաբողոն, արկանելի, բրդգգեալ, դառնենի, գօտի, ընթանոց, լկտէագարդ, զուռար, խլայտեռ, կամար, կապերտակ, կողինաւոր, հանդերձիկ, մանեակ, մենթան, նափորտ, շղարշատեռ, պախճաւանդ, պատմուճակ, պարեհնակ, սնգոյր, ստեւ, քուրճ...

Այս բառերից մի քանիսը, ըստ ՆՀԲ-ի որպէս առաջին վկայութիւններ, առկայ է Ոսկեբերանի գործերում (գառնենի, կապերտակ, զուռար), մի քանի բառեր էլ միակ վկայութիւններով են (ընթանոց, կողինաւոր, մենթան, պախճաւանդ): Պարեհնակը չկայ ՆՀԲ-ում: Մի քանի բառեր յետհինգերորդարեայ վկայութիւններ են, սակայն դրանց բնոյթը, յատկապէս՝ իրանական ծագման դէպքում ենթադրում են դրանց գործածութեան աւելի վաղ շրջան: Բերենք մի քանի օրինակներ վերը բերուած բառաշարից. «Ձհանդերձան գառնենիս ունիցին եւ զբարսն գայլենիս» (Մտթ. 23): «... կաղօք եւ կուրօք եւ կարկամելովք ընուցուս, բուկովք եւ որ միայն պարեհնակն ունիցին եւ զայն ծակոտկեն» (Ոսկ. Պօղ. 1, 529): «Լուաց զոտս աշակերտացն եւ ընջաց ընթանոցաւն» (Ոսկ. Ես. 405): «Նափորտունքն արձակեալք, կօշիկքն պճնեալք, պարեգօտքն լայնեալք, գօտին սեթեւեթեալք» (ն. տ. 67): Ներքոյիշեալ յատուածը այս կարգի բառերի գործածութեան ցայտուն օրինակ է. «... հանցէ զփառս հանդերձից նոցա եւ զգարդս նոցա եւ զհիւսս եւ զճամակալս եւ զպսակակալս եւ զմահիկս նոցա եւ զպաճուճանս երեսաց նոցա, զքօղեայս եւ զպարանջանս եւ զմեհեւանդս նոցա, զգինդս եւ զմատանիս եւ զկշտապանակս իւրեանց, զգրածիրանին եւ զմիջնածիրանին, զառտնին արկանելին եւ զարտաքին խլայտեռս լակոնացի, զծիրանին եւ զկարմիրն, զբեհեզն, զոսկեհոռն, զերկնադոյնն, զճամկաւորն, զշղարշատեռն, զոսկեճամուկն, զոսկետտունն եւ զկապուտակագործն» (Ոսկ. Ես. 35):

347-2003

տասխան հատուածում չկան, փոխարէնը այստեղ կան՝ զկարմիրն, խլայտեռն, կապուտակագործն (համեմատել ենք Աստուածաշնչի, 1895, Պոլսի հրատ.): Հագուստի, զարդերի անուանումներից զատ, Ոսկեբերանի որոշ հատուածներում հաղորդում են նաեւ այլ կարգի տեղեկութիւններ: Օրինակ՝ սգաւորի՝ սեւ հագնելու մասին իրագեկում է ներքոգրեալ հատուածը. «Ո՞չ տեսանիցես զկանայս, յորժամ տեսանիցես զարս ամուսինս մերձ ի վախճանել՝ զիարդ սեւազգած լինի, զգլուխ եւ զոտս ի թուխս համակեն, եթէ հնար ինչ էր ամենեւին զհանդերձան ի թուխս դարձուցանէին» (189): Մէկ այլ հատուածում զարդարուելու, այս կամ այն հագուստի կամ վերջինիս հագնելու ձեւի արծարծումն է՝ քրիստոնէական բարոյականութեան սկզբունքների տեսակէտից: Բարոյական չի համարուում չափից աւելի զարդարուելը, սեթեւեթանքը, կօշիկը պճնելը եւ այլն: «Վասն այնորիկ յաճախագոյն իմն լինի մեղադիր Պօղոս պաճուճանացն եւ կարի յարգէ զցածութիւնն. զի ոչ մեծութեան ինչ նշանակ է այնչափ զարդ յանձին կապել, այլ ընդողնելոյ եւ պչրանաց: Եւ ոչ միայն զարդն, այլ եւ սնգոյրն եւ ծարիրն եւ ոտիցն ճեմելիք եւ հնչիւնք բարբառոյն, աչացն մեղմեղանք, արտեւանացն ստէպ ստէպ քթթելիք, ամենայն ինչ հանգոյն պոռնկաց: Նափորտունքն արձակեալք, պարեգօտն լայնեալք, գօտիքն սեթեւեթեալք, կօշիկքն պճնեալք» (Ոսկ. Պօղ. 1. 67): Սրանք վերաբերում են կանանց եւ, հեղինակի ընկալմամբ, «չվայելէ կնոջ ցածնոյ»:

Բ) Արհեստ, արհեստագործական իրեր, կահկարասի. Ասրագործ, գինեվաճառիկ արուեստ, ծաղարար, մայրեւելութիւն, չուանաման, ոստայնանկ, պատկերակուռ, պղակունդագործ, փոկածեւ, փոկահանու-



թիւն...

Այս բառերից ուստայնանկ եւ խոհակեր յաճախական են V դարի այլ գործերում եւս:

Ասրագործ եւ փոկաձեւ բառայօդուածները տակ ՆՀԲ-ն Ոսկեբերանից յղում չունի, միւս բառերի դէպքում միակ վկայութիւններն են, չուանաման-ը ունի եւ այլ վկայութիւն՝ ուշ շրջանից:

«Խոհակերացն ձեռք առնէին զմեզ պատուական ...եւ սպասատրացն որ զսեղանն կազմեն եւ ուստայնանկացն եւ ասրագործացն եւ որ զքրէական գործսն գործիցեն եւ զծաղարարացն եւ որ զփոխանդայն գործիցեն եւ որ զսեղանսն յօրինեսցեն» (Ոսկ. Պօղ. 1, 600-601): «Ի մշակութեան կերակրելն... յուստայնանկութեան զգեցուցանելն... դարբնութեան ունիցի զբազն... ի հիւանդութեան՝ արօր կազմել, ի փոկահանութեան կարս հարկանել, ի շիմողութեան եզանոցս շինել, ի մայրեւորութեան փայտս հատանել եւ ի հացարարութեան...» (Մատթ. 2, 745):

Աւելի մեծաթիւ են զանազան իրերի եւ գործիքների անուանումները.

- Ազբոց, բահ, գերանդի, դակու, երկմատնի, թակոյկ, թելակ, թեւեակ, խոփ, կարթ, կամփսակ, հոճիչ, մանկաղ, շմբոց, ուրագ, սափոր, սղոց, տաշտ...

«Եթէ ոչ ի դարբնութեան ունիցի զբահն եւ զերկմատնիս, զխոփն, զգերանդին եւ զմանկաղ եւ զդակու եւ զտրագ եւ զայլ ինչ բազում» (Ոսկ. Մտթ. 2, 745):

Աւելորդ չենք համարում Պօղոսի թղթերի մեկնութիւնից բերելու մի հատուած, որտեղ ներկայացւում են ուստայնագործութեան հետ առնչուող մի շարք բառեր: «Իսկ կանայք յորժամ ուստայնականիցեն եւ զկայսն ազրոցօքն բախիցեն եւ ինքեանք եւս կկոցօքն ընդհարկանիցեն եւ զայն չար խտիր համարին: Եւ

դարձեալ յորժամ զթելն հոճչան հոճիցեն եւ ստէպ կկիցեն եւ ազբոցն եւ ստեծն ի ստէպ հոճելոյն ընդ միմեանս բախիցին եւ մանաւանդ ընդ կայսն եւս եւ զայս առաւել խտիրս համարին» (Ոսկ. Պօղ. 1, 806):

Եթէ այս հատուածը հինգերորդ դարեայ լինելն էլ կասկածելի լինի, ապա արժէքաւոր են հաղորդուող տեղեկութիւնները: Ընդգծուած բառերից միայն կայսն եւ կկոց-ն են աւանդուած ՆՀԲ-ում: Ի դէպ, վերջինում կայս-ը ուստայնագործութեանը վերաբերող հասկացութիւնն է, այլ նաւի կայս: Ծմբոց, «պարկ», թելակ, «թիակ» եզակի վկայութիւններ են: «Զթելակս ուղղիչ նաւին ի ձեռն առեալ» (ՆՀԲ): «Հնգամարտիկքն յորժամ չգուցէ ախոյեան ի միջի զշմբոցն լնուն աւազով եւ առնուն ըստ անձին, զի այնու զբնաւ ոյժն փորձիցեն» (Ոսկ. Մտթ. 2, 8):

Գ) Կենդանիներ, թռչուններ. ասպուճակ, գայլ, գետնաուիւծ, երինջ, էշ ընդդայ, իշավայր, խորդ, ծիծեռ, կոյաղնդիւռ, ձիաստաց, նապաստակ, շաւառն, շնկնճիթ, վարդապաքաղ, փաղ, փոր...

Այս շարքից ասպուճակ, ընդդայ, կոյաղնդիւռ, շնկնճիթ, վարդապաքաղ միակ վկայութիւններն են: Բերենք մի քանի բնագրային օրինակներ. «Իբրեւ զդեւս հալածականս եւ իբրեւ զընդդայս ծովու վնասակարս» (Ոսկ. Մտթ. 2, 596): «Այս ոչ այլ ոգիք այնպիսի ինչ, որ քան գծով եւ զգետնաուիւծն եւ չար շրջըջին» (Ոսկ. Պօղ. 1, 489): «Եւ իբրեւ զկոյաղնդիւռսն, որ աղբով պարարին» (Ոսկ. Մտթ. 2, 597):

Ոսկեբերանի մի շարք գործերում հանդիպում ենք «անասնոցն եւ սողնոց եւ զազանաց եւ թռչնոց եւ լուղակաց... ընտանեաց եւ վայրեաց» անուանումների

եւ դրանց յատկանիշների նկարագրութեանը՝ խորդ եւ ծիծեռը չուող են, սիրամարգը եւ փորը գեղեցիկ, նապաստակը՝ արագավազ, այծեամն ու արծուիմ՝ քաջատես եւ այլ (Ոսկ. 1, 430): Հանդիպում ենք նաեւ բազմաթիւ առասպելական կենդանիների նկարագրութեան, նաեւ դրանց հայերէն հոմանիշներին:

«Որչափ ինչ զճառս առանցելոցն յանձին նկարեն, առաւել աւելի քան զայնպիսեացն որք զձիացուլսն ի քմաց ստեղծանեն եւ զքիմառսն, այսինքն որ վիշապաուիւծ քաղսն համբաւեն եւ զայլս նոյնպիսիս վիշապոտունս եւ զոր սկիւղան անուանեն, որ թարգմանի ասուուք. որպէս եւ հայք ծովացուլս իմն եւ զվիշապս մարդակերպս եւ պայս եւ առլեզս համբաւեն: Եւ այսու յայտ առնեն թէ առասպելս իմն ի քմաց կարկատեն: Եւ եթէ զմի ինչ ցանկութիւն նոցա կամիցի ոք նկարել ոչ ասուուքն, ոչ վիշապաուիւծքն քաղքն եւ ձիացուլքն երեւեսցին ինչ առ այնու առասպելութեամբ. այլ գտանիցէ ոք զամենայն զազանս միանգամայն անդր կուտեալ եւ այնմ ինչ ոչ համեմատել» (Ոսկ. Պօղ. 1, 602):

Դ) Ուտելիք, սնունդ. ասպակ, արգանակ, աշտուճ հաց, բաղարջ, բանջարիկ, դեղահոնդ, թան, խորակ, կտապ, նկանակ, պախաճճամ պատրուճակ, պղակունդ տոխուլ, փոխընդեայ, քաքար...

Այս բառերի զգալի մասի վկայութիւնները Ոսկեբերանի տարբեր գործերից են, իսկ ասպակ, խորակ, պախաճճամ ՆՀԲ-ում վկայուած չեն: Դրանք համապատասխան օրինակներով կան Արմ.-ում: Ահա մի քանի բնագրային վկայութիւններ. «Դու ազգի ազգի պղակունդս ուտես եւ նմա ոչ հաց աշտուճ» (Ոսկ. Մտթ. 2, 693): «Ամաչեմ զամենայն պատմել, բայց սակայն ասացից զհաւան եւ զփասեանսն եւ զգունակ թանսն եւ

զարգանակ, զազգի համեմունս ընդ միմեանս խառնեալս, զբալար՝ եւ զչոր խորտկացն համադամս» (Ոսկ. Մտթ. 69):

Ե) Արատ, հիւանդութիւն. ախտանալ, անդամախեղութիւն, գլխագարութիւն, գլխածանրութիւն, գլխացաւութիւն գունատութիւն, դամարիլ, դիւախանգարել, ըմփորտել, ծանրաստամոքս, խելացնորութիւն, խօթ, հաշմակ, ճերոտ, մշտակաթ, մորոսական, մղձկեմ, շրթնատ, ոտնացաւութիւն, որովայնածետութիւն, ջերմ, փայծաղնացաւ...

Վերոյիշեալ բառերից ախտանալ, գլխացաւութիւն, խօթ, մշտակաթ, ջերմ կան նաեւ այլ հեղինակների մօտ: Միւսները կամ առաջին վկայութիւններ են, կամ միակ: Ծրթնատ, գլխածանրութիւն բառերով ՆՀԲ-ն Ոսկեբերանից վկայութիւն չունի: «Ոտնացաւութիւն եւ գլխագարութիւն եւ անբժկելի ցաւք» (ՆՀԲ):

«Բազում դեղնութիւն եւ գունատութիւն հեղու գերեսօքն» (ՆՀԲ): «Իսկ զայտմունս, զփքացմունս եւ զբիւր զայլոց եւ ախտից զուղխս՝ ի փափկութենէ եւ ի շատակերութենէ լինել ասեն» (Ոսկ. ճառք, 1861, 42): «Դարձեալ մշտակաթն, ասէ, պիղծ է: Յոգիսդ իմանայլիք զմշտակաթն, զիարդ ցանգ վատնէ զսերմն բանին» (Ոսկ. Պօղ. 1, 308): Սոյնպիսի ինչ եւ նոցա ոգիք ջրգողեալք տնտղեալք, տորոմեալք (Ոսկ. Պօղ. 1, 535):

Կարելի է ներկայացնել նաեւ այլ իմաստային խմբեր (գունանուններ, ռազմական գործ, բնակարան, շինութիւն եւ այլն), սակայն դրանց չենք անդրադառնում, որովհետեւ կամ ներառուող բառաքանակն է քիչ, կամ էլ այլ հեղինակների գործերում սովորական ու յաճախական միաւորներ են, այսինքն՝ չեն բացայտում Ոսկեբերանի բառապաշարի առանձնատկութիւնները:

Ոսկեբերանի բառապաշարն ենթադրում է տարբեր ոճական շերտեր. դրանցից մէկին թեթեւակիորէն անդրադարձել ենք, այժմ քննութեան առնենք ակելի ամբողջական ձեւով:

ԿԱՆՈՆԱՐԿՈՒԱԾ ԲԱՌԱՊԱՇԱՐԻՆ ՅԱՐՈՂ ՇԵՐՏ

Ընձեռած նիւթը թոյլ է տալիս այս շերտը տարբերակել մի քանի յատկանիշներով.

1) Բառային տարբերակների առկայութիւն

Այս կարգի միաւորների գոյութիւնը ենթադրում է կա՛մ սխալագրութիւն, կա՛մ յետին գրչութիւն, կա՛մ համաժամանակեայ կտրուածքի ոճական տարբեր շերտերի առկայութիւն: Մի շարք օրինակների դէպքում չբացատրելով առաջին գործօնները՝ չի կարելի մերժել վերջին գործօնը: Առարկայական դժուարութիւնը այն է, որ ըստ էութեան հնարաւոր չէ սպառնիչ տարբերակել նշուած գործօնները: Այդ իսկ պատճառով ներկայացնում ենք նիւթը՝ ըստ առանձին գործերի՝ փակագծերում նշելով միայն մեզ հետաքրքրող միաւորների աղբիւրները, միւս՝ յաճախական կամ կանոնարկուած միաւորի վկայութիւնը չենք նշում:

Եսայու մարգարէութեան մեկնութիւնից. - չաւատալ (16,56) - չհաւատալ, օրկանոց (139) - ուրկանոց, ձունի (352) - ձօնի, բարժանել (273) - բաժանել, պարհել (292) պահել, ութանասուն (233) - ութսուն, Վիրհ (143) - վիհ, հանութ (419) - խանութ, ամբ (292) - ամպ:

Պօղոսի թղթերի մեկնութիւնից (Հտ. 1). - առանցանք (291) - գառանցանք աշտիճան (286, 575) - աստիճան, վարձուոր (92) - վարձաւոր, տժգունել (219) - դժգունել, տժգոհ (525) - դժգոհ, աղեւա-

ղել (617) - աղաւաղել, տարժան (352) - դաժան...

Նշուած գոյգերից մի քանիստ, երբ միաւորները իրանական փոխառութիւններ են, կանոնարկուածին յարող շերտի մէջ ներառուողները ակելի հին ձեւեր են՝ վոհուկ, բարժանել, պարհել, որոնք Ե դարում գործառու էին որեւէ տարածքում՝ հանդիսանալով բարբառային տարբերակներ:

Բերենք որոշ օրինակներ. «... եւ գՔրիստոս հանապազ ի մուրականաց կերպարանս տեսանեմք» (Ոսկ. Պօղ. 1, 29): «Աւուրք կենաց մերոց ութանասուն ամ» (Ոսկ. Ես. 233): «... առ ի չաւատալոյ» (ն. տ. 83, 84): «Վիրհ մեծ է» (ն. տ. 143): «Խնդրեցէք դուք զվոհուկս եւ զգետնակոչս եւ զընդվայրախօսս ...» (ն. տ. 105): «Եւ եթէ գինչ ինչ վոհուկն իցէ՝ պարտ է ասել» (ն. տ. 106, նաեւ՝ 107, 173, 312): Այս գրքում հանդիպում ենք նաեւ եղ եւ մեղր՝ յաճախական իւղ եւ մեղրի փոխարէն: Եթէ առաջինը գրչական վրիպակ կամ հետագայ բարբառային նորամուծութիւն չէ, ապա գործ ունենք իւղ բառի Ե դարի բարբառային ձեւի հետ. սակայն սա հաստատելու համար լրացուցիչ փաստեր են պէտք նաեւ այլ հեղինակներից:

2) Գ-ով ժխտական ձեւերի առկայութիւն

«... զչլուրս եւ զչլեալս տայ խօսել» (Ոսկ. Ես. 292): «Եւ զօրէնսն չեւ էր ընկալեալ եւ զերախտեացն ինչ փորձ չեւ էր առեալ» (ն. տ. 11): «Զի եթէ ըմբռնեմ, ասէ, չտամ ապրել» (ն. տ. 143): «Զիրս եւ չգիրս ի մեղաց եւ յարգարութենէ ընտրէ Աստուած» (ն. տ. 279): «Թէպէտ աշխարհի տէր առնիցես զնա, չգիրտէ ունել շնորհ, չհամարի թէ ունի ինչ» (Ոսկ. Պօղ. 1, 235):

3) ...իկ- ածանցով բառեր

Սրանք, ընդհանրապէս դիտուում են որպէս կենդանի, ժողովրդախօսակցական ձեւեր, որոնք մեզ են հասել դեռեւս հեթանոսական շրջանի երգերից՝ եղեգնիկ, կարմրիկ... եւ այլն: Ոսկեբերանի գործերում էլ սրանք յաճախական են (տե՛ս այդ խմբաւորման տակ բերուած շարքը): Մատթէի մեկնութեան մէջ հանդիպում ենք՝ հացիկ (311), անասնիկ (51), մրգիկ (67), ջրիկ (69):

4) Այլ կարգի բառեր

Վերջիններս մէջ կարելի է առանձնացնել հոմանիշ շարքերի այնպիսի անդամներ, որոնք նուազ գործածական են կամ էլ հէնց բառակազմութեամբ ենթադրում են կենդանի խօսքի կամ բարբառային-խօսակցական լեզուի երանգ: Խօսքը վերաբերում է առաջին հերթին բարդ բառերին:

Դիահաւանութիւն - «յուզարկաւորութիւն», ոտնառել - «սայթաքել», առն տալ - «ամուսնացնել», որ վկայուած են Պօղոսի թղթերի մեկնութեան մէջ, անշուշտ գրական նորմայից տարբերուող բառեր են. «Քանզի բազում են ոտնառութիւնք» (1, 484): «Առն տուր, հատ զպատճառս պոռնկութեանն» (834): «Յուզարկաւորութիւն կոչեն եւ ոչ դիահաւանութիւն» (128): «Քանզի զաղտ իսկ մտանէ գազանն եւ ամենայն յանգալս առանց ոտնաձայն առնելոյ՝ հանէ հոսէ արտաքս ի ներքուստ (Ոսկ. Մտթ. 237): Զեռնձգութիւն գլխաշտակութիւնսն ասէ» (Ոսկ. Ես. 440): «... Զի չէր ինչ մարթ զանդամալոյծն եւ գտանջեալն՝ որ մազկոյնն մերձ ի մահն էր բառնալ եւ բերել» (Ոսկ. Մտթ. 2, 415): Մազկոյնն նշանակում է «հոգեվարք»: Մի որոշ խումբ բառեր էլ (պարզ կամ բաղադրեալ) հէնց արտաքին տեսքից եւ ստուգաբանական առանձնայատ-

կութիւններով, նաեւ նուազ յաճախականութեամբ ենթադրում են չհանոնարկուած բառաշերտ:

Նշենք մի շարք բառեր Եսայու մեկնութիւնից. զարդասիրիկ (40), խոշոտ - «չոր խոտ» (119), կցրել (145), խնդակոթ (424), կոճկցել, որոթ - «ափ, կշիռ» գրկատարած (105), աղուճակ (370), այգեկութ - «միրգ քաղող», (31), վարմարկել (18): Յորջորջումն այգեկաց եւ հնձողաց ճառէ (31):

«Քանզի ի վարմարկել զնա հինին, այնպէս համարէին, թէ արդ եկեալ անկեալ իցէ ի բուն որսն» (18-19): «Զի յորժամ դառնայցեմք առ Աստուածն, ընդունիցի զմեզ գրկատարած ձեռօք» (205):

Մատթէի մեկնութիւնից. - կաշանամ - «կաշուի նման դառնալ» (73), կցրել - «կծկել» (76), վարդենիք - «վարդաստան» (58), կոյաղնդիռ - «բզեզ», (597), սամսարել - «սիգալ» (706), կցիր - «ազահ» (709):

Պօղոսի թղթերի մեկնութիւնից. - բացիփիկ (68), կտղիմ - «կատաղել» (22), մցոել - «անհազ ուտել» (126), միաճետի (878), տոհորակել - «գնալ» (69), ողողութիկ - «հեղեղատ» (111): Սրանք առաջին հատորից են: Նմանօրինակ բառեր շատ կան յատկապէս երկրորդ հատորում. շողիք - «լորձունք» (93), շրթնատ (295), խելաթափ (165), որմածակ (437), շուշեմ - «ծուլանալ», (459), շլան - «մոխիր» (673), փթրիմ - «փշրուել» (618), զուշ եւ ուրուշ (553):

Մի շարք բառերի նոյնիսկ իմաստները ստոյգ չեն: Ի՞նչն է սրանց ստուգաբանութեան եւ իմաստի ճշգրտման դժուարութիւնը: Զբացատրելով որոշ դէպքերում աղաւաղումների հնարաւորութիւնը՝ կարծում ենք, որ ստուգաբանական-իմաստաբանական դժուարութիւնների պատճառը այդ բառերի ժողովրդախօսակցական բնոյթն է: Անդրադառնանք մի

ասա, զպարանոցդ ի վեր ձգես, ընդէ՞ր գնաս ի ծայր մատանցդ, հի՞մ զյօնսդ ի վեր պարզես, ընդէ՞ր զլանջս այտուցանես. դու որ չկարես մազ մի սպիտակ առնել կամ թուխ եւ որպէս թէ ամենակալ ոք իցես՝ այնպէս ամբարտաւան ճեմիս» (Ոսկ. Պօղ. 2, 303):

Փոխաբերացումը, իհարկէ, միայն մարմնի մաս արտայայտող բառերում է, կան այլ կարգի օրինակներ եւս.

Քարեղէն-«դաժան». «Թէպէտ եւ գազանամիտ իցէ եւ քարեղէն եւ տմարդի» (Ոսկ. Պօղ. 2): Ընդգծուած բառով ՆՀԲ-ն բերում է տասնեակ օրինակներ՝ բուն «քարէ, քարից պատրաստուած» նշանակութեամբ: Միայն վերջին օրինակը, որ դարձեալ Ոսկեբերանից է, ունի «քարսիրտ, դաժան, իմաստը. «որ թէ եւ քարեղէն քան զամենայն ոք լինիցիս մարդասէր» (ՆՀԲ):

Աղ առնուլ-«սեղան նստել». «Եթէ աւազակք յորժամ ընդ միմեանս աղ առնուցուն, մոռանան զբարսն» (Ոսկ. Մտթ. 2, 498): ՆՀԲ-ում դարձեալ եզակի վկայութիւն է:

Կորացեալ ճանապարհ-«... զճանապարհն, որ բազում ժամանակ կուրացեալ իցէ եւ անհետ եւ աներեւոյթ լեալ... պարտուպատշաճ է մաքրել եւ յստակել» (Ոսկ. Ես. 248): Ի դէպ, իւրատեսակ այս մտածողութիւնը առկայ է եւ արդի բարբառներում: Ղարաբաղի բարբառում, օրինակ, չգործող, ջուր չունեցող ջրհորը կոչւում է «քօռ վէր»:

Աղաջոր. բառարանները նշում են միայն «աղի ջուր, ծովի ջուր, նշանակութիւնը: Բանասէր Հ. Ա. Վարդանեանի կարծիքով, այս բառը նախնի հայերի մէջ ունէր արհամարհական նշանակութիւն, «իսկ զոր բազում աղաջուրք ի փիլիսոփայիցն ասեն» (Ոսկ. Ես. 318):

Անկախ փոխաբերացուող միաւորների իմաստային խմբերի պատկանելութիւնից, երեւոյթը առկայ է գրաբարում եւ այն առօրեայ խօսքի արտայայտութեան դրսեւորումներից մէկն է:

ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԲԱՌԱՐԱՆԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նշել ենք, որ Ոսկեբերանի համարեայ բոլոր գործերի բառապաշարը ըստ ամենայնի արտացոլուել է գրաբարի բառարաններում, յատկապէս՝ ՆՀԲ-ում. շեշտում ենք ՆՀԲ-ն, որովհետեւ գրաբարի բառարանների շարքում այն աւելի ծաւալունն ու հարուստն է. յատկապէս՝ բնագրային վկայութիւնների տեսակէտից: Իսկ պատմական բառարանի հիմնական արժանիքը, առաջին հերթին վկայութիւններն են, որ չունի, ասենք, բառային միաւորներով աւելի հարուստ Առձեռն բառարանը:

Ոսկեբերանի բառապաշարի եւ ՆՀԲ-ի համադրումով փորձել ենք մասամբ առանձնացնել՝

ա) այն բառերը, որոնք բառարանը վկայակոչում է միայն Ոսկեբերանին՝ որպէս եզակի վկայութիւն կամ ժամանակագրորէն առաջին վկայութիւն.

բ) այն բառերը, որոնց բառարանային վկայութիւնները ուշ շրջանից են, բայց դրանք կան Ոսկեբերանի գործերում (այսինքն՝ ՆՀԲ-ն վերջինից յղում չունի).

գ) ՆՀԲ-ում ընդհանրապէս չվկայուած բառեր: Նպատակայարմար ենք համարում այս հարցին անդրադառնալ ըստ առանձին գործերի, անհրաժեշտութեան դէպքում՝ որոշ նկատառումների ու պարզաբանումների փորձերով:

Պօղոսի թղթերի մեկնութիւն (Հտ. 1): Ներքոյիշեալ բառերի՝ ՆՀԲ-ի վկայութիւնները այս գրքից են³: Աղացիկ (20),

աղուեսաքուն (125), ամենավաճառ (666), ամճաբեր (532), անտաղտուկ (462), բացխփիկ (68, 895), զնդակից (575), դեղահունդ (127), դիահանութիւն (128), ընչիկ (515), թոյրաթուխ (660), իւղիկ (127), կողիւմ (22), մցոիւմ (126), ուշակալ (79), չորաբեկ (127), չմարթութիւն (532), ստկեմ (400), տաճարակողոպուտ (187), տգոյն (830), փոխելապատճառ (187, 188):

Փայտոտն եւ այլափոխիկ վկայուած են ՆՀԲ-ում, բայց օրինակները Ոսկեբերանից չեն, այլ ուրիշ հեղինակներից: Այնինչ Ոսկեբերանի թարգմանիչը այդ բառերը օգտագործել է. «Աթենացիք քանզի ոչ ի սկզբանէ ընկալան զդիսն, այլ ընդ ժամանակս ժամանակս զոր գտանէին առնուին ի պաշտօն զկէսս ի հիւսիսային կողմանց եւ զկէսն ի պանանց կերպարանացն, այսինքն է ի փայտոտանց» (302): Ծանօթագրում է՝ «թերեւս յայժոտանց, որպէս առասպելն զպանայ չաստուածութեան»: Այժոտն էլ ՆՀԲ-ում ուշ շրջանի վկայութիւն է՝ Յայսմաւուրքից: Պերեպիշտ (603) նոյնպէս ՆՀԲ չկայ, ԱԲ-ում կաղանկատուացուց է:

ՆՀԲ-ՈՒՄ ԿԱՆԱՆՈՒՄ ԲԱՌԵՐ

Աղբակիր. «Եւ հասանէ տեսանել այնուհետեւ աղբակիրս որթաւորս, թիւաւորս զամենեսեան խառն եւ անհարց ի ներքս մտեալ» (782):

Աչակորեմ. «... ընդդէմ դարձար հրամանաց, աչակորեցեր եւ չունիս համարձակութիւն...» (548):

Բայրաներ. «Զի՞նչ ինչ քան զայն դառն կայցէ ուր թշնամութիւնք են եւ պատերազմունք եւ բայրաներ. ո՞չ խիղճ մտացն իսկ տանջէ զմեզ եւ ուտէ» (219):

Գասրիմ. «Յորժամ ի բազում կարօտութեան սովիցի եւ սրայցէ գասրիցէ եւ

չյազիցէ» (237):

Դեղանման. «Ընդդէմ որոց դպրապետ ի վերայ զՄովսէս կացոյց եւ իբրեւ մանկուտոյ այնպէս տայր նոցա հրաման, դեղանմանս ստուերազիրս գրէր, որպէս եւ մեք զալփափեսոսն զառաջինն» (569):

Եղոփիմ. «Նոյնպէս եւ քան զեղջերու չիք ինչ պիղծ, եւ վասն այնորիկ ասեն, կոչի եղոփիմ, զի զօձ ուտէ» (306):

Երկրապաշտ. «Եւ ոմանք բոզից զեղուն տան եւ այլք երկրապաշտէից, ոմանք սուտակասպասից, այլք ծանականաց նրբակառափանաց» (29):

ԱԲ-ն երկրապաշտեայ մեկնում է «աշխարհասէր»: Այս բառարանը ունի նաեւ երկրապաշտ, «հացկատակ, շողոքորթ»: Հաւանօրէն բառը պէտք է ուղղել՝ երկապաշտ, որը աւելի յաճախական է Ոսկեբերանի գործերում եւ ՆՀԲ-ն էլ վկայութիւններ ունի:

Թաղագործ. «Աղէ, ասէ, եթէ դերձակն եւ թաւագործն զինչ ինչ՝ որ չիցէ պատշաճ նոցա արուեստին ստանայցեն կամ գործ ինչ կամ աւրինակ»: Յունարէն բնագրում՝ կաշեհատ: Ըստ այդմ՝ Հ. Ա. Վարդանեանը բառը ուղղում է՝ թաղագործ (ՀԱ, 1914, 320): Այս ուղղումը համոզիչ է, մանաւանդ որ Ոսկեբերանի գործերում կայ եւ թաղախար, թաղաթափ եւ այլն: Նշենք, որ թաղագործն էլ ՆՀԲ-ում վկայուած չէ:

Թաղաթափ. «Կին մարդ հոլանեալ ծանակեալ կայ առաջին եւ դու չկորանայցես զի այնպէս հերարձակ տեսանիցես զնա: Տես զիարդ զանձն թշնամանես. եթէ թաղաթափ տեսանիցես զնաժիշտն, քեզ թշնամանս համարիս զիրսն, իսկ յորժամ քեզէն մերկանաս, զայն չհամարիս ինչ վնաս» (835):

Թաղնորդ-«նոյն թաղում բնակուող». «Բազում անգամ յանձու ինչ տեղուջ ի

մէջ բազում թաղմորդաց տունն իցէ շինեալ (832):

Թերայրեաց. «Եւ այլ ինչ ոչ իցէ անդ տեսանել, բայց միայն ջուր եւ հուր եւ կաւ եւ մոխիր եւ զփայտսն թերայրեացս» (782):

Ըմփորոտել. «Որ չկամեցան սպասաւոր լինել ընկերին մինչ արտաքոյ քան զվիշտան էր, ինքն գտանիցի ի նոյն վիշտս չարչարեալ. քանզի անտի ըմփորոտել ցաւն գայցէ հասանիցէ եւ ի նա» (242): «... եւ զամենայն մարմինսն ջրգողեալ տորոմեցուցեալ եւ զերեսս եւ զամենայն իսկ ըմփորտեալ եւ զոտս եւս մեծամեծ քան զգերանսն ոռնացուցանել եւ զընդերսն փձեցուցանել՝ եւս մեծ քան զկարաս փչեցուցանել» (601):

Ընդարձակաւեր. «Ընդարձակասէր եւ յամենայն կողմանս տարածեալ, ամփոփէ, ի վայր կծկէ անձնասիրութեան սատակումն» (234):

Լաբարոն. «Ձոր օրինակ որ զնշանս արքունի կրեն ի պատերազմի, մանաւանդ զոր լաբարոնն կոչեն Հոռմք» (25):

Լոկաւոր. «Եթէ այնպէս իցէ, ընդարձակ ճանապարհն գնասլիր. զի այն է, որ զայնպիսիս տանի, անձուկն եւ նուրբն զնեղեալսն զմաշեալսն զլոկաւորսն որ ոչ ինչ ունիցին, այլ բռնիք են զոր ընդ այն մարթի տանիլ...» (339): Բառը ունի ԱԲ-ն՝ «բան չունեցող, մերկ» բացատրութեամբ: Ոսկեբերանը «մերկ» իմաստով օգտագործում է եւ լոկ բառը: «Մերկ եւ լոկ ելանէր» (Մտթ. 1, 340):

Ծարտարագիտել. «Եւ ձեզէն իսկ ճարտարագիտէք որոց բարեկամք լեալ իցեն սիրտք» (239):

Կողմոց. «Եւ զոր օրինակ ի նաւի թէպէտ եւ մեծամեծ գործք իցեն եւ ներքնապատ կողմոցքն չիցեն՝ չէ ինչ օգուտ» (612):

Մուճաւոր. «Պաճուճեալք եւ պճնեալք յօդ եւ ի ձորձ, գեղեցիկ հանդերձիւք, հասակօք գունեանք, մունաւորք եւ աղջանդամք» (530): Նշանակում է «վայելուչ»:

Նայակամ. «Ձի եթէ ոչ աղբերք եւ ճահիճք եւ գետք եւ ծովք եւ ամենայն խոնաւութիւն նայական շոգովն ի դիմի հարեալ ջերմութեանն զովացուցանէին...» (803):

Նրբակատափ. տե՛ս երկարապաշտ-ի օրինակը:

Նսիհ. «Եւ զիարդ յորժամ զամենայն ինչ քան զնա նախամեծար առնիցեն եւ զինչս եւ զծնունդսն իմն եւ զճակատագիրն զոր ասեն եւ զխտիրս եւ զհմայս եւ զկիւսս եւ զնսիհս» (28): Նշանակում է «կախարդ»:

Ողողոթի. «Ձոր օրինակ ողողոթիք եւ հեղեղատք ջուրց սաստկութեան ի դուրս տանց եւ խանութից յորդիցեն, տեսանիցես զբնակիչսն աղմկեալս եւ խոռովեալս» (111):

Պախաճճամ. «Եւ զոր օրինակ մեք մանկուտոյ պղակունդս եւ պախաճճամս գնեմք եւ արծաթով պատրեմք» (669):

Պաշտամանել. «Միթէ չիմացա՞ւ թէ յայլս է պաշտամանել, այլ իմացաւ եւ սիրեաց եւ բարի կալաւ» (317):

Պսնմն. «Որպէս ցորենոյ որոմն եւ վարդի պսնմն» (399): Յունարէն բնագրում՝ «փուշ»:

Սնամահիկ. «Ած զմեզ զայս Աստուած ի հրահանգս ի մարտկաց հանդիսից տեղի զի պսակիցէ եւ մեք երթամք սնամահիկ ի գործոյն առաքինութենէ» (492): Ըստ Արմ.-ի՝ մահակ-«վարձ, վաստակ», բառը հանդիպում է միայն սնամահակ-«անվարձ մնացած» բարդ բառի մէջ: Արմ.-ը օրինակը բերում է Ոսկեբերանից՝ նշելով, որ նոյն բառի տարբերակն է սնամահիկ-ը, որը ունի Առձեռն բառարանը:

րակն է սնամահիկ-ը, որը ունի Առձեռն բառարանը:

Ստկանք. «Կամիս տեսանել ստկանս եւ խստութիւնս» (401): «Դարձեալ ստկանք եւ անաղատութիւն, յորժամ ստտակասպաս բանիւք ոք ողորցիցէ ոչ ինչ ի լաւութեան պէտս, այլ պատրեալ ի մարմնաւորացս» (ն. տ):

Վատամտեմ. «Դու զբրիստոս առնես յորդեգիրս եւ վատամտե՞ս եւ չտայցես առատաբար, զի ունիցի բազմապատիկ զգուշութեամբ» (356):

Քաջանայեաց. «Արթուն ասէ, այսինքս ուշակալ լինիցի, բիւրապատիկ աչս ունիցի արագատես քաջանայեաց» (79):

Այս կարգի առատ նիւթ կայ եւ երկրորդ հատորում գետեղուած գործերում:

Ակնատ. «Ձի եթէ որք զհին զողջակէզսն մատուցանէին՝ ամենայն իրօք զգուշանային եւ ոչ զակնատն եւ ոչ զկոթատն եւ ոչ քոստոն եւ կամ շրթնատն՝ չկամէին զայն մատուցանել» (295):

Անդհամուխ. «... եւ այլոց ընկերացն ալեկօծս անդնդամուխ լեալս՝ հողմակօծք նաւաբեկք տագնապեալք եւ մահկանացուք» (764):

Անմարդուչ. «... եւ չլինի ծոյլ ինչ եւ ոչ ասէ թէ անպաճոյճ եմ եւ անմարթուչ» (374): Նշանակում է «տգետ»:

Բացբարձիչ. «... իսկ օրէնքն չլինի բացբարձիչ բնութեան օրինացն, այլ առ ի յուղղել զբարս յօժարութեանն ի չար գործոցն» (131):

Դժուարահոտ. «Ձի եւ ոչ թքանել զայսիսի շողիս ի բերանոցն կամին այլ ձեռօք ընդունին...քանզի թանձր է եւ դժուարահոտ» (93):

Խելաթափ. «Եւ տեսցուք որ ... խելաթափի ի գինւոյն եղեալ է» (165):

Խելացնորոթիւն. «զոր օրինակ եւ որ զխելացնորութիւնն ունիցի. յորժամ զինքն չճանաչիցէ» (302):

Կաղապէս. «Քանզի եւ ոչ ակն կարէ գենումն լինել զպոռնկական տեսանելով ... եւ ոչ կաղապէս գնալովն որք ի թատերան ընթանայցեն» (295):

Կայթոք եւ պայթոք. «խաղ ու պար» - «Եթէ կամիցիս եւ բիւրք իսկ, որ զկայթիսն եւ զպայթիսն առաջի քո հարկանիցեն» (251):

Հակառակամիտութիւն. «Քանզի դիւրափոխ է ազգ մարդկան եւ առ ի յընդդէմս հակառակամիտութիւն պատրաստ» (629):

Մանաւանդ. «... եւ բաղանիս ճաճանչաբերս, յարկս շատրուանօք եւ բիւր սենեակս կազմես ի զուր եւ ընդ վայր» (19-185):

Մանկադէմ. «նոր տեսանես զդաւաբութիւնս, այլ ալեւորեալ տեսցես զբարսս. մանկադէմս բնութիւնս» (644):

Որդէզէն. «... ապա եւ զԵղիա մարդասպան վարկանիցեմք եւ զԱբրամ դարձեալ ոչ միայն մարդասպան այլ եւ որդէզէն» (213):

Փիլիսոփայագոյն. «Եւ քանզի առ փիլիսոփայագոյնսն էր բանն նորա, իսկ ապա չթեթեւագոյնսն ասէ» (176):

Քնարեղոյ. «Որպէս զի եթէ ուսիցէ՝ թէ ոչ զքնարէն եւ ոչ զայլ իմեքէ զարուեստէ, այլ զնաւավարէն եւ զքնարերգողէն» (143):

Հետեւեալ բառերը ՆՀԲ-ում միայն Ոսկեբերանից են. անձրեւածեւ (360), աստակակօծ (386), զիսագերծ (614), դիւրաչոր(673), խաղողաբեր (617), ծառագնաց (736), շլան-«մոխիր», (673), շանթընկեց (360), ոչխարավաճառ (550), որմածակ (437), պտղական (617), ջերմընկալ (470):

Մատթեի մեկնությունից հետևալ բառերը ՆՀԲ-ում միայն Ոսկեբերանից են. ահեղամուղ (632), արեւիշուշտ (11), երեքձեղունեայ (743), ընդդայ (596), ընդարձակերասանակ (732), թեյակ (421), խիխաւրաս (650), խուանաւագութիւն (705), խորավանք(739), կաշանամ (73), կցրել (76), կոյադնդիւ (650), մագկուինչ (405), մատանակ (125), յօպնակ (377), նշատերեւ (708), շանի (736), պահայոյզ (538), չորեքձեղունեայ (743), սամսարել (706), վարդենիք (581), տրմղութիւն (87), ցայգակուիւ (72), փոկահանութիւն (745):

Ծանի «շամ կերակուր» բառը, թերեւս, միակ կիրառութիւնն է հայ հին մատենագրութեան մէջ:

Բառիմաստի ճշգրտմանը օգնում է յունարէն բնագիրը (տե՛ս ՀԱ, 1913, 346): Հետագայում Գարագաշեանը Լաֆոնտէնի առակների թարգմանութիւններում շամի բառը գործածում է «շներ» իմաստով:

Սպասալար բառի ՆՀԲ-ի վկայութիւնը Ոսկեբերանից է: Մատթեի մեկնութեան մէջ այն կայ. «... եւ դու զնոսա իբրեւ հրեշտակութեան պատգամաւոր եւ սպասալարս ընդունիս եւ հրաւիրես զամենեսին գալ կոյանոց զլսելիսն առնել» (567):

ՆՀԲ-ում չաւանդուած բառեր

Ախճապակի. «... եւ քո թողեալ նմա վանս տալ, զատակսն ախճապակեայ զարդարես եւ որմս մարմառակուոս» (720):

Անձնգով. «Եւ զի անձնգով եւ անագորոյն, սակայն եւ ընդ այն ոք չհակառակի» (709): «Եւ անձնգով յորժամ եւ զփոքունս եւս անտես առնէ» (710): Ոսկեբերանը ունի եւ՝ անձնգովութիւն: ՆՀԲ-ն՝ անձնագրով, որի հինգերորդարեայ յղումը Ոսկեբերանի յիշեալ գրքից է:

Խեղդարկեալ. «Բաւական լիցի աղքատաց, դարմանիչ հիւանդաց, վշտացելոց դիւրութիւն առնիցէ, ի կապանաց զբազոււմս արձակիցէ եւ զայլս ի մետաղաց ազատիցէ, զխեղդարկեալսն ի կախաղանաց իջուցանիցէ, գերեաց դարձ առնցէ» (376):

Սուտերդումը. «Արդ եղիցին արքաղքատք եւ ազատք սեղանակիցք քո եւ մի սուտերդումնք զմիմեամբք» (695):

Եսայու մարգարէութեան մեկնությունից են ՆՀԲ-ում ներքոյիշեալ բառերը. աղուճակ (370), այգեկութ (31), անդամայաղթ (345), առգին (274), արագախարիկ (12), բախտբաշխ (12), բանընդդէմ (2), գնդակից (66), գոռական (58), գրկատարած (205), զարդասիրիկ (40), երագանցուկ (119), երկգունակ (460), երկրանախանձ (255), երկնագէտ (335), զգօնամիտ (136), զգօնաբարոյ (ն. տ.), ընթանոց (405), խաւեակ (52), խեղբիւմ (308), խլխլական (340), խնամածական (320), խնդակոթ (424), խոշոտ (119), կենցական (232), կոճկցել (436), կցրել (415), հացամու (230), ձեռակոծ (301), ճարակաշատ (94), ճոխաճանութիւն (17), մեղկախորհուրդ (35), մերկատարր (180), ուշոգի (12), որոթ (255), ուրալի (318), պարածեւ (159), ջրհեղեղական (332), սաքաթափանք (138), վայրապարագարդ (39), վարմարկել (18), ցակն (342), փոփոգել (405), քրայական (263):

Միտր-«պսակ» բառի՝ ՆՀԲ-ի վկայութիւնը ուշ շրջանից է: Բայց այս գրքում բառը կայ. «Միտրն պսակ ինչ բոլորեալ նարօտ ականակուռ զոր դնեն ի գլուխ փեսայք հարսինս» (458): ՆՀԲ-ն բառը բերում է միթո ձեւով:

ՆՀԲ-ում չվկայուած բառեր

Անտարսիս. «Կամ որպէս միւս թարգման Սիմաքոս ասէ՝ անտարսիս. այսինքն՝

միթէ բանիւք ինչ կուի վճարիցի» (103): Յուն. «ապստամբութիւն» բառն է:

Գատոյ. «... եւ զանձանց ինչ վնաս ոչ գիտացին, այլ զանին գատոյս բերեալ, առնիցեն զանձինս վնասակարս» (290): Արմ.-ը համարում է անստոյգ բառ:

Խորարթում. «Քանզի ոչ կուէին ընդ դեւս վնասակարս եւ ոչ փախչէին ի վնասակարացն, այլ իբրեւ ի քուն իմն ի խորարթուն՝ ետուն զանձինս յափշութիւն» (424): Բառը ունի միայն ԱԲ-ն՝ «խոր քուն» բացատրութեամբ: Թերեւս առարկելի կարող է չլինել խորարթում ուղղումը: Ճիշտ է, վերջինս չկայ բառարաններում, բայց այդ բառին հանդիպել ենք Ե դարի մէկ այլ գործում՝ Եւսեբիոս Եմեսացու ճառերից մէկում. «Այլ յորժամ պարտ էր սկսել, յայնժամ խորարթուն լինէին զլիսաւորքն» (ՀԱ, 1956, 399): Անվերապահօրէն չենք պնդում այս ուղղման հաւաստիութիւնը, մանաւանդ որ Ոսկեբերանի նոյն էջում հանդիպում ենք եւ ծանրարթում բառին:

Հեռասէր. «... յառաջագոյն բառնայ զնոսա, զի մի այնպիսի ինչ գործ գործիցեն, զի պատերազմասէրք, հեռասէրք եւ կուուղք էին» (152):

Ընդգծուածները հոմանիշներ են:

Մարդաշախորժ. «Յորժամ տեսանիցես իշխան յանդուգն եւ անողորմ, մարդաշախորժ՝ թագաւորել, մի այնպիսի աղօթս առնիցես, զի նա ի միջոյ բարձցի» (154):

Օքթանք. «Յօնովք, ասէ, ականարկէին». որ պոռնիկ կանանց իմն սեփական նշանակ է, զայս յեղյեղուլ եւ շքեմանս եւ զշուայութիւնս ցուցանել, ճեմել, ճօճել, զհասակօքն նայել» (36): Ճիշտ է ԱԲ-ի՝ «անամօթութիւն» մեկնութիւնը:

Ստկան. «Աստ թուի ինձ թէ զսուտ մարգարէիցն ականարկէ եւ կամ զայնցանէ՝ որք բանիւք պաշտօնն առնէին, զի մեծամեծ վնասք եւ յայսպիսի իմն ստկանաց լինին...» (32):

Վաղաշէջ. «... վաղաշէջ երագանցուկ համարիցիս» (119):

Վերը նշուած բառերը հիմնականում արտացոլուած են բառարաններում՝ ԱԲ, Արմ: Քանի որ ԱԲ-ը բնագրային օրինակներ չունի, ապա բառիմաստների համընկնումներից կարելի է եզրակացնել, որ նկատի ունի Ոսկեբերանի թարգմանութիւնները, թէեւ բացառուած չէ, որ բառարանագիրները հանդիպած լինէին այլ գործերում: Մեզ հանդիպել է միայն երկու բառ, որոնք ընդհանրապէս չկան գրաբարի բառարաններում: Առաջինը քիչ վերը բերուած անտարսիսն է, որ յունական փոխառութիւն է, իսկ երկրորդը՝ Պօղ. թղթերի մեկնութեան մէջ՝ պատման: Ահա այդ եզակի վկայութիւնը. «նուազագոյն քան զնոսա արար չափով, մարմնով փոքր ինչ հասակաւ պատման» (1, 867): Մեր կարծիքով, սա պայման-ի սխալագրութիւնը չէ, այլ պէտք է կապել վերջինիս pait-matn ձեւի հետ, որից եւ ծագել է պայման բառը: Իրանագիտութեանը այժմ յայտնի է, որ pait մասնիկը պարթեւերէնում պահպանում է նոյնութեամբ, իսկ միջին պարսկերէնում pāy ձեւով: Այդ յատկանիշի հիման վրայ էլ տարբերակուում են հայերէնի իրանական փոխառութիւնները՝ ըստ պարթեւական եւ միջին պարսկական շերտի: Պարթեւերէնից են՝ պատմուճակ, պատմուճան, պատուաստ, պատկեր... միջին պարսկերէնից՝ պայքար, պայուսակ, պայագատ եւ այլն: Ուրեմն, պատման-ը պէտք է համարել պարթեւերէնից կատարուած փոխառութիւն, եւ այդ հնագոյն բառը

անպայման բառարանագրել:

* * *

Ամփոփենք: Յովհան Ոսկեբերանի ոսկեդարեան եւ յետոսկեդարեան թարգմանութիւնների լեզուի բծախնդիր քննութիւնը անշուշտ կը նպաստի հայոց լեզուի պատմութեան մի շարք հարցերի նորովի լուսաբանմանը, գրաբարի ըստ կարելու լիակատար բառարանի կազմմանը:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԲ – Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865:

Ակիճեան – Ակիճեան Ն., Դասական հայերէնը եւ վիեճակական միութեան դպրոցը, Վիեննա, 1932:

Աճառեան – Աճառեան Հ., Հայոց լե-

զուի պատմութիւն, հտ. 2, Երեւան, 1951:

Արմ – Աճառեան Հ., Հայերէն արմատական բառարան, հտ. 1-4, Երեւան, 1971-1979:

Թոռնեան – Թոռնեան Թ., Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց, Վենետիկ, 1891:

ՀԱ - Հանդէս ամսօրեայ

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, հտ. 1-2, Վենետիկ, 1836-1837:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Ասորերէնից կատարուած որոշ թարգմանութիւնների բառապաշարի անդրադարձել ենք ՀԱ, 1999 թ. համարում, էջ 217-247:
- 2 Անշուշտ, ցանկը ամբողջական չէ, եւ կարող են լինել վրիպումներ: Բառիմաստները չենք տալիս, քանի որ դրանք կան Արմ.-ում կամ ստոյգ չեն, որոշ դէպքերում նշում ենք մի քանի համանունների իմաստները:
- 3 Փակագծերում նշում ենք էջերը:

DIE ANFÄNGE DES CHRISTENTUMS IN ARMENIEN

Erich Kettenhofen

Michel Van Esbroeck zum 70. Geburtstag

Der Kirchenhistoriker G. Alberigo hat schon vor über 30 Jahren die auffallende Einseitigkeit kirchengeschichtlicher Darstellungen angeprangert: Der Schwerpunkt liege meist auf den Geschehnissen im Okzident, und wenn schon der Blick sich in den Osten wende, dann werde der griechische Osten bevorzugt gegenüber den orientalischen Nationalkirchen¹. Mit einer dieser Nationalkirchen, einer sehr ehrwürdigen, will ich mich hier beschäftigen, mit der armenisch-apostolischen Kirche, wie sie sich selbst titulierte. Sie hat vor nunmehr einem Jahr (2001) offiziell den 1700. Jahrestag ihrer Christianisierung und ihre Erhebung zur Staatsreligion durch König Trdat im Jahr 301 n. Chr. gefeiert. Apostolisch nennt sie sich, weil sie ihre Ursprünge auf die Heiligen Thaddäus und Bartholomäus zurückführt, zwei aus dem Kreis der 12 Apostel Jesu Christi. Da ich selbst in einer Stadt lehre, die sich des Grabs eines Apostels rühmt, das des Hl. Matthias, und wo bis in die 60er Jahre des vergangenen Jahrhunderts von offizieller diözesaner Seite keine Zweifel an der Historizität dieser Tradition geäußert wurden, ist dies einmal als Anspruch nüchtern festzuhalten. Der frühere armenische Patriarch mit dem Sitz in Konstantinopel in den Jahren vor dem Genozid an den Armeniern im Osmanischen Reich, Malachias Ormanian (1895-1908,+1918), hat gar präzise die Tätigkeit des Hl. Thaddäus in die Jahre 43 bis 66, die des Hl. Bartholomäus in die Jahre 60 bis 68 datiert². Für Ormanian ist dies, so das Fazit des 1. Kapitels seines Werkes über die armenische Kirche, ein 'unumstößliches Faktum in der Kirchen-

geschichte³. Über ihr angebliches missionarische Wirken wie die Einführung von tonsurierten Klerikern will ich mich hier nicht weiter auslassen⁴, sondern zuerst die ältesten literarischen Zeugnisse in armenischer Sprache befragen, welche uns Traditionen über den apostolischen Ursprung der armenischen Kirche überliefert haben.

Die älteren Versionen des sog. Agatangelos-Zyklus⁵ erwähnen die genannten Apostel als Missionare in Armenien noch nicht; erst die in die 2. Hälfte des 5. Jh. n. Chr. zu datierenden 'Epischen Geschichten', die man früher einem Faustus von Byzanz zuschrieb, erwähnen mehrmals den 'Thron des Apostels Thaddäus' (III 12; IV 3)⁶ wie auch die 'Verkündigung des Apostels Thaddäus' und seinen Märtyrertod unter König Sanatruk, dem 'Aposteltöter'(III 1)⁷; allerdings rechnen manche Gelehrte auch mit einer Interpolation dieser Notizen in den ursprünglichen Text⁸. In dieser nicht leicht historisch auszuwertenden Quelle sind erstmals die Tradition, mit der die armenische Kirche die offizielle Christianisierung ihres Landes verbindet, und jene Tradition, die die Bekehrung in die apostolische Zeit datiert, miteinander verknüpft. Bereits hier werden die beiden Wurzeln der armenischen Kirche, die griechische, geprägt durch die Nachbarschaft zu Kappadokien, und die syrische, geprägt durch ihre Nähe zu Edessa und dem nordmesopotamischen Raum, sichtbar. Noch augenscheinlicher wird die Verbindung der beiden Traditionen bei Movsēs Horenaci, dem so umstrittenen Autor, zu dem ich später noch ausführlich Stellung nehmen werde; bei ihm